



ԲԱՇՋԱԿԱՆ ԲԱՆԱՄԻՐԱԿԱՆ

Տ Ա Խ Ա Կ Ա Ն Ե Ր Ա Կ Ա Ն

ՕՐԱԳԻՐ

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԲԱՆԱՄԻՐԱԿԱՆ

Տ Ա Խ Ա Կ Ա Ն Ե Ր Ա Կ Ա Ն

ԳԻՏԵԼԵԱՑ

ԺԲ. ՏԱՐԻ. ԹԻՒ 18.

1854

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15.

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԴԱՍՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Բ.

Կրօնք : (Տես երես 241)

Յիշեցի այնպիսի վկայութիւններ,
որ կասկած չեն տանիքը. նոյնպէս հոս կը
բերեմ նաև՝ Համապոլի 1843ին Քու-
նիսի 15ին նստին մէջ ըսածը.

“Հատքարոյական ճշմարտութիւն-
ներ կան, կ'ըսէ, որ հարկաւոր է
դպրոցներուն մէջ տարածելը: Ի՞այց
ովկ կայ որ զատիկայ կատարէ: Ալ
տեսնեմ որ օրէնքը կեցած է, բայց
ամուլ ամեննեին: Դուք կը ճանչնաք
մեր դպրոցներուն ամէն աշակերտնե-
րը. զիրենք հարցուցեր քններ էք, ես
ալ նոյնպէս: Ի՞այց թէ որ տեսակ հը

,, հարցման իրենց ընես, հաշտու ԿՌ.
,, հասկընաւ ԻՐԵՆՑ ՀԱՐՑՈՒԱԾԸ:
,, Լրբոր մտքէս անցրնելու ըլլամ”
,, թէ ովկ է որուն յանձնուած է այս
,, բարոյական և կրօնական ուսմունք
,, սովորեցընելը այդ դպրատանց մէջը,
,, տակնուվրայ կ'ըլլամ. վասն զի չեմ
,, գիտեր որուն յանձնուած ըլլալը, բայց
,, այս միայն՝ որ եկեղեցական հը էայ, որ
,, երբէն երբէն հմտ էկեղեռայ,,:

Համապոլ կրնար նաև աւելցընել.
թէ այն եկեղեցականին թող չեն տար
ուրիշ բան ընել:

“ Ախաբուինք , կ’ըսէ նոյնպէս Վէ-
,, բադրի . բաւական չէ որ որոշեալ օր
,, մը գպրոցներուն մէջ եկեղեցական
,, մը երևնայ , որշափ ալ պատկառելի
,, եկեղեցական ըլլայ , ու քիչ մը ատեն
,, տղոցը հետ կրօնական հոգւոյն վրայ
,, խօսի : Ի՞յդ ոգին ուրիշ կերպով
,, մարդ չկրնար զգենուլ , բայց շարու-
,, նակելով նոյն ուսմունքը , որուն մէջ
,, իբրև թէ հեղեալ է աստուածային օ-
,, րէնքը : Ուսմունքները թող պարզ մա-
,, տենագրական ալ ըլլան , բայց պէտք
,, է որ այն հոգւով մալակոնած ըլլան :
,, Ա երջը ուր կ’երթայ՝ թէ որ հաւա-
,, տոյ վարդապետութիւնը երկբայու-
,, թեաննիւթ դառնայ : Կրօնքի վրայօք
,, տղոց պէտք է աներկեայելի ճշմար-
,, տութիւններ սովորեցրնել , անոնց հա-
,, մար վիճաբանական հաւատքը քիչ
,, ատենէն մեռեալ հաւատք կը դառ-
,, նայ ” :

Ի՞նձ ստուգիւ այս չարեացը վրայ
Ճարտասանութեամբ ու ճշգութեամբ
ողք մը : Խւ իրաւցընէ՝ ովլ այս բաներուս
փորձը առած չէ : Հայտնի բան է թէ
բաւական չէ որ դպրոցին զրանը կամ
Ճակտին վրայ կրօնքը կպուցած ըլլայ .
այն ալ բաւական չէ՝ որ դաստիարա-
կութեան մէջ կրօնքը նոս նը ունենայ ,
ու երբեմն երբեմն երեւայ . . . բոլոր այս
ամէն բան պարապ կ’ըլլայ , թէ որ կրօն-
քը խորը չժամանցէ , թէ որ ինքը
շունչ չտայ , թէ որ ինքը իր աստուա-
ծային ազգեցութեամբը ձեռք չերկն-
ցընէ , թէ որ ինքը ըլլայ դաստիարա-
կութեան ամբողջ ոգին :

Հայտնի բան է որ ոյժ ունենալու և
ազգու ըլլալու համար՝ պէտք է որ
կրօնքը իր գործքը զօրաւոր կերպով ու
յարատեւութեամբ կատարէ . պէտք է
որ ինքը իր հոգւովը ամէն բանին շունչ
տայ . պէտք է որ Ուսման ու Շարեկը-
թութեան ինքը իր լեզուն ու իր գե-
ղերուն գաղտնիքը փոխ տայ . ինքը այս
երկու վարպետներուն հետ ընկերանայ
ու ամէն բանի մէջ ոգեսորէ զանոնք , որ
գրեթէ տղայական հասակէն անմեկին
են . ապա թէ ոչ այն հազիւ երբէք ե-

ղած հանդէսները , որոնց մէջ թոյլ
տրուած է որ իր ձայնը լսել տայ , բա-
ւական չեն իրեն գործոյն յաջողութիւն
տալ :

Կ իտակը ըսենք . այն պաղ ու ձան-
ձրալի տեսութիւնը ինչ բանի կու գայ .
ինչ բան կրնայ ընել կրօնքը՝ թէ որ
շատ անգամ հեռու մնայ անոնց աչքէն ,
անոնց ուսմունքէն , անոնց յաջողու-
թիւններէն , անոնց խաղերէն , անոնց
կերակրէն , քունէն , կենակցութենէն ,
զուարձութիւններէն ու վշտերէն , և
անոնց վերաբերեալ ամէն օգուտներէն ,
զորոնք որ պարապ տեղը իրեն որդիք
կ’անուանէ . թէ որ դատապարտուած
է զրսէն անտարբեր կենալ այն ամէն
բանի մէջ , որ իրենց կեանքը կը գրաւեն
ու իրենց մոտաց կամ սրտին իղձերն են .
թէ որ հազիւ մէյ մը կու գայ , խեղչ
աքսորելոյ մը պէս , անոնց տեղւոյն սահ-
մանը , ու իրենց անծանօթ լեզու մը կը
խօսի :

Ո՞վ չգիտեր , և ովլ չզգար , երբ դըպ-
րոցին մատուուր մտնէ մէկը՝ որ այն տե-
ղը անարգել տեղ մըն է , ուր իրարու կը
հանդիպին երբեմն Շարեկըթութիւ-
նը , Ուսմունքը , Կրօնքը , վարժապետ-
ները , տեսուչն ու համարակալք , և
կրօնական վարժապետը ուսմանց վե-
րակացուաց պաշտպանութեանը տակ :

Հաւալի բան . ինչ ըսեմ . հոն Կրօն-
քը ցաւագին մօր մը կը նմանի , որուն
թող չտար չարաշար կասկածոտ հայրը՝
որ համարձակ իրեն տղոցը հետ տես-
նուի : Ի՞նիկայ ալ Ճարը հատած կ’եր-
թայ տանը մէկ ծածուկ անկիւն մը քա-
շուած՝ իր գիրկը կը քաշէ զանոնք , և
անհանդարտ սրտով քանի մը սրընթաց
ու սահմանեալ ժամու մէջ անոնց ա-
ռատ առատ դասեր խորհուրդներ կու
տայ , ու շտապելով մը անոնց ձեռքը
կ’աւանդէ իր իմաստութեանն ու իր
սրտին սիրալիր գանձերը : Շայց ափսոս
որ խեր չկայ . խեղչ տղաքը անով զին-
քը չեն կրնար Ճանչնալ . քիչ մը մեծե-
րը տնեցիներէն իր Ճերմըկցած մազե-
րուն վրայ իննտալ ալ սովորած են . խկ
աւելի լաւաբարոյք իր ըսածներէն բան

մը չհասկընալով՝ աղքատ ողորմելի օ-
տարականի մը տեղ կը դնեն զինքը :

(Օ ասոնք կ'ըսեմ առանց դառնու-
թեան սրտի , բայց ոչ թէ և առանց
տրտմութեան , և իրաւ են . աւետա-
րանական քահանայութեան որ և իցէ
աւելի նուազ կամ ծանր աշխատու-
թեանցը հետ բաղդատելով , աւելի ցա-
ւալի բան չեմ տեսած՝ բայց մեր խեղձ
եկեղեցականաց պաշտօնը մեր դպրոց-
ներուն մեծագոյն մասին մէջ :

Ալ հառաջեն ամենքը , ինչպէս տե-
սանք . կը զարմանան ալ , բայց անիրաւ
տեղը :

Ի՞նչ պէտք է զարմանալ : Ա, որ բան
մը չէ ասիկայ . վասն զի ինչ որ կ'ու-
զէին՝ անոր բնական հետեանքն է ա-
սիկայ :

Ի՞նչ բան է ուզածնին : Ի՞մենքը գի-
տեն , ծածուկ բան մը չէ . ուզածնին է
աշխարհականացնել տղոց դաստիարակու-
թիւնը :

Դաստիարակութեան աշխարհականա-
ցնելը յիսուն տարուընէ ՚ի վեր երեք
չորս նշանի մեծամեծ բառերէն մէկն
եղած էր :

Եւ հիմա վախճանին հասան :

Դաւըլ , աշխարհական պէտութիւնը ,
ինչպէս որ այս ալ ըսին , դպրոցներուն
մէջ ուսման կարգաւորիչ ու բարեկըր-
թութեան վարժապետ եղաւ :

Ա երջը աւելորդ ու եկամուտ բանի
մը պէս բարոյական ու կրօնք ներկայա-
ցուցիչ մը զրին ու Ողորմաբաշխ ա-
նուանեցին , որուն թոշակ մը , բնակա-
րան մը ու սովորեցնելիքն ալ կապեցին :
Եւ ինչպէս կաքաւի , զինաշարժու-
թեան , անգղիարենի վարպետներուն ,
նոյնպէս իրեն ալ օր , ժամու դաս սահ-
մանեցին :

Բայց ասկէց են այն հետեանքները ,
որոնց վրայ այսօրուան օրս կը հառա-
չենք :

Դարն է՝ Ի՞ետարանին տեղ՝ տղոց
դաստիարակութիւն տուողը : Ալ գան-
գատին , բայց անիրաւ տեղը : Ի՞յս բա-
նիս մէջ դպրը այն բանը կընար տալ
ինչ որ ունէր . վեր ՚ի վերանց նիւթա-

կան բարեկըրթութիւն մը , և ցամաք
ուսմունք մը :

Ինականաբար դպրը իրեն նպատակ
կ'առնու մարդուս ստորին մասը : Ո՞է-
կալ մասին չկընար ինքը համարիլ . թէ-
պէտ և ոչ իսկ կը պահանջէ , և ոչ ալ
իրեն պարծանք կը սեպէ : Ո՞անաւանդ
թէ պէտք է մեծարանք ընել իրեն՝ որ
յայտարարութիւնը խաբէական չէ :

Ուրեմն դաստիարակութիւնը աշխար-
հականացնելը՝ դաստիարակութիւնը ջըն-
ջելըսելէ . ու այս բանս լաւ իմացուե-
ցաւ : Ի՞յսպէս դաստիարակութեան
անունը պաշտօնակալ մը չեղաւ , և ոչ
իսկ Ֆալու , որ համարձակի ինքը զին-
քը Պաշտօնէայ հաստարակաց դաստիարակու-
թեան անուանել : Ի՞նկարելի էր բառը
գործածելը . ինչպէս և ոչ գործքը :

Փուշ տեղը բարեպաշտ օրէնսդրին
մէկը առաջարկեց , որ տէրութեան ամէն
դպրոյներուն մէջ մէյմէկ բարոյականի
Հարժապէտ հաստատուի : (Ծրէնսդրի
ժողովը այս որ լսեց , ծիծաղել սկսաւ :
Ի՞նչ ըսել կ'ուզէր ասով . ինչո՞ւ էր ծի-
ծաղը . բարոյականին վրայ , թէ վար-
ժապէտաց : Ոչ մէկուն և ոչ մէկալին
վրայ անտարակոյս . հապա՝ առաջար-
կութեանը վրայ : Ի՞յնպէս ծիծաղելի
բաներ չեն՝ ոչ ձշմարիտ բարոյականը և
ոչ ձշմարիտ բարոյականի վարժապէտ-
ները . հապա միայն առաջարկութիւնը
ծիծաղին շարժեց : Կրնային աւելի
գէշի մեկնել այն առաջարկութիւնը .
բայց բարեսրտութեամբ եղած ըլլա-
լուն՝ զուարձալի միայն սեպեցին . ու ժո-
ղովոյն ինտարը բաւական է միտք ձգել՝
որ ծանրագլուխ ու պարզասիրտ մար-
դիկ բարոյական ըլլար կ'ըսեն առանց
հաւատոյ վարդապէտութեան , վասն
զի առանց ատենից արդարութիւն ըսել
կ'ըլլայ :

Եւ ոչ հաւատոյ վարդապէտութիւն
առանց կրօնից . վասն զի առանց հո-
գոյ փիլիսոփայութիւն ըսելէ :

Եւ ոչ կրօնք առանց քահանայու-

թեան . վասն զի երեսկայական անշաստատ պաշտօն կ'ըլլայ :

(Ծ) կայտ և խորին իմաստութիւն մը կար այս ծիծաղին մէջ , բայց խնդիրը քայլ մը առաջ չգնաց :

Ի՞սորուան օրս ալ դեռ վիճաբանութիւն կ'ընեն , ու իրարու հետ չեն միաբանիր :

Ի՞այց ամենքը միաբերան կ'ըսեն թէ կրօնական և բարոյական դաստիարակութիւն մը պէտք է :

Եւ բարոյական կարպէտներու տեղ՝ դեռ ուսմանց կարպէտները բռնած են :

Ի՞ս մեծ խնդրոյս վրայօք վեր 'ի վերոյ միայն անցայ ես հոս : Վիչ մը ետքը նորին պիտի խօսիմ այս նիւթիս վրայ , մանաւանդ թէ ոչ երրէք ձեռքէ պիտի թողում այս նիւթը : Ի՞յլ ամենայն խնդիրք ասոր հետ կապակցութիւն ունին ու կախմունք :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՏԱԳՐՈՒԹԻՒՆ

Անվերսա քաղաքը . — Մայր եկեղեցին :

Ի՞նվերսա քաղաքին ծագմանը վրայօք հիշատակագիրները ամենևին ձիշդ տեղեկութիւն մը չեն տար , այլ միայն հրաշալի գէպքեր , առասպէներ վրան կը պատմեն . բայց այս իրաւ է թէ իր գիրքը շատ գեղեցիկ է , և փառաւոր շէնքերով զարդարուած : Ի՞նդարձակ դաշտի մը վրայ կառուցած է , զորն որ Ը էլտա գետը կը պատէ կը պաշտպանէ : Ո՞եծամեծ նաւեր կրնան այս գետէն մինչեւ Ի՞նվերսա գալ : Ի՞նդարձակ և խոր նաւահանգիստ ունի , և գիրքը այսպէս յարմար է , որ կարծես թէ 'ի քնէ սահմանեալ է Եւրոպից առաջին վահաւական քաղաքներէն մէկն ըլլալու : Եւ արդարեւ վեշտասաներորդ դարուն խիստ բանուկ էր իր վահաւականութիւնը և Ը էլտան ամէն ազգաց նաւերով լեցուած էր , ու մի և նոյն ժա-

մանակը 2,500 նաւ կը գտնուէր նաւահանգիստը , անանկ որ եկող նաւերը շաբաթով կը սպասէին մէկմէկու՝ նաւահանգիստը մտնելու համար : Ի՞յլ եղաւ իր ամենէն ծաղկեալ դարը . իսկ անկումը սկսաւ 1585^ն , և վերջի հարուածը առաւ իր նաւահանգստին գոցուելովը Ո եսդֆալիոյ հաշտութենէն վերջը : Պարապ տեղը աշխատեցաւ Յովսէփ Բ Ը էլտան նորէն բանալու , որն որ Աաբոլէնի պէս մեծ մարդու մը կարօտ էր իր առաջին պայծառութեանը համար : Աաբոլէն միտքը զրած էր իր բոլոր ընդարձակ տերութեան նաւահանգիստն ընել զանիկայ՝ վահաւական նաւերու և պատերազմական նաւատորմիղներու : Եւ ասով կ'ուզէր վնասել Ի՞նգիացւոյն իր ոխերիմ թշնամոյն . բայց իր առջի ինկնալու ատենը 1814^ն Ի՞նգիացիք բոլոր Աաբոլէնի անբաւ աշխատութեամբ ըրած պատրաստութիւնները փակացուցին : Ի՞նկէց վերջը անոր տեղը Ի՞մնդերտամտիրեց գրեթէ բոլոր վահաւականութեան . և Ի՞նվերսա երրորդ կարգի քաղաքներուն կարգը անցաւ , և այս օրուան օրս հազիւ թէ 90,000 բնակիչ ունի մէջը : Խիստ ամուր քաղաքէ . ունի մէկ բերգ մը , և 10,000 տնէ աւելի : Ի՞ղնէգործածները , շաբարը , մետաքսեայ կերպասները , կտաւը , բամբակը , և այլն , խիստ յարգի են : Երեւլի են իր մեծակառոյց շէնքերը , որոնք իր փառքը կ'աւելցնեն . ինչպէս վահաւականաց ժողովատեղին ալ , որ բոլոր Եւրոպից հնագոյնն է . նախապէս խոր հըրդանոցը : Ո՞նի դարձեալ ծովային զինարան . բայց ամենէն հոչակաւորն է իր Ո՞այր եկեղեցին : Ի՞յլ հոյակապ եկեղեցին մետասաներորդ դարուն վերջերը սկսած է շինուիլ և երկոտասաներորդ դարուն սկիզբները լմընցած : Ի՞սկայ 500 ոտք երկայնութիւն ունի , 230 ոտք լայնութիւն և 300 ոտք բարձրութիւն : Ի՞յլ ընդարձակ եկեղեցւոյս մէջ մատրանց բազմութիւն կայ , և երկու հարիւր կամարէն աւելի՝ նոյնչափ թուով սիւներու վրայ առած :